Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1) Յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրերի մասով իրականացնել համայնքի և կապալառու կազմակերպության միջև կնքված պայմանագրերի հավաքագրում և մշտադիտարկում:

2) Կնքված պայմանագրերի մշտադիտարկման և հավաքագրված տվյալների վրա ստեղծել տեղեկատվական բազա՝ կապալառու կազմակերպության տվյալներ, պայմանգրերի կնքման ամսաթվի և պայմանագրով սահմանված աշխատանքները կատարողական ժամկետների ինչպես նաև տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության վերաբերյալ և ներկայացնել անմիջական ղեկավարին:

3) Իրականացնել սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության այցելություններ ամիսը 2 անգամ յուրաքանչյուր ծրագրի համար:

4) Բոլոր ծրագրերի ընթացքի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն և լուսանկարներ ներկայացնել անմիջական ղեկավարին ամիսը 2 անգամ:

5) Ներառել սուբվենցիոն ծրագրերով շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի կազմում և սահմանված կարգով մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:

6) Ծրագրերի ավարտից հետո իրականացնել շահագործման հանձնված օբյեկտների ձեռք բերված մեքենամեխանիզմների, տեխնիկայի և գույքի կիրառման օգտագործման մշտադիտարկման ու որակային արդյունավետության մասով այցելություններ ծրագրերի ավարտից հետո առաջին տարվա ընթացքում:

7) Այցելության արդյունքներով գնահատված արդյունավետության կամ անարդյունավետության, ինչպես նաև շահագործման ընթացքում բացահայտվող թերությունների առկայության մասին եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համապատասխան համայնքի ղեկավարին և անմիջական ղեկավարին:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ 6 (վեց) ամիս:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ **200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Փորձագետի պարտականությունները՝

1. բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
2. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.
3. պահպանել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
4. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
5. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն.
2) հանրային ծառայության կամ քաղաքաշինության բնագավառում կամ մասնագիտական առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ
3) հաշվետվությունների և այլ փաստաթղթերի հետ աշխատելու փորձ.
4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներին տիրապետում:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում **(դիմումի ձևը կցվում է).**
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- անձնագիր կամ նույնականացման քարտ.
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.

- ինքնակենսագրություն.
- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին **(հայտարարության ձևը կցվում է):**

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- հարցազրույց:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ **անձամբ:**

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 23.09.2025թ.

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, 14:00-ից մինչև 15:00-ն:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7

ՀՀ քաղաքացիները տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, հեռ.՝ 060650626:

18.09.2025թ.